



ԳԵՂԱՍՏ

«ՉԽԱՐԸ»

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 12 դեկտեմբերի 2025թ. թիվ 24(628)

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ՄԱՏՈՒՑՎԵՅ ՍՊԻՏԱԿԻ ՄԵԾ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՂԵՐԻ ՀԻՇՎՍԱԿԻՆ



թյունների, այլ հիմնարկ-ծեռնարկությունների աշխատակիցները, Հայ Առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի ներկայացուցիչները եւ բազմաթիվ անհատ քաղաքացիներ Գավառի Սուրբ Աստվածածին եկեղեցու բակում ծաղկեպսակ դրեցին եւ ծաղիկներ խոնարհեցին 1988 թվականի դեկտեմբերի 7-ի Սպիտակի մեծ երկրաշարժի զոհերի հուշաքարին:

Դեկտեմբերի 7-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանը, Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գրիգոր Դաշտոյանը, տեղակալ Գրիգոր Բոշյանը, Գեղարքունիքի մարզպետի եւ Գավառի համայնքապետարանի, Գավառի կրթամշակութային հաստատու-

Սպիտակի մեծ երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված արարողություններ տեղի ունեցան նաև Գեղարքունիքի մարզի Մարտունի, Սեւան, Վարդենիս եւ Ճամբարակ համայնքներում:

Գեղամա աշխարհ



*Քեզ ավերել են ու թողել մեռակ,
Եվ արյունաքամ քո վերքերից դեռ
Ծորում է արյուն՝ որպես հուշերի
Անմոռանալի բեկորներն անմեռ,
Ու մոխիրներից դու քանի՜ անգամ
Եվ քանի՜ անգամ քո որդիների
Թափված արյունից հառնել ես որպես
Չարթոնք ու փյունիկ,
Իմ ցորենագույն, իմ ցորենապաշտ,
Իմ հի՛ն հայրենիք:
Ու երբ շուրթերիս առաջին անգամ
Մեղահացի պես քաղցր ու թուփչ,
Բառեր էին պայթում,
Եվ շիկահողի խորհուրդն էր խոսում
Հանդից տուն դարձած հորս ձեռքերին,
Ու մայրս՝ որպես քո արելը սուրբ,
Ինձ գիրկն էր առել վաղ առավոտվա
Արձաթե ցողի երազով անշեջ,
Դու ի՛նչ եղար հավատի նման,
Բույրով մայրենի,
Իմ ցորենագույն, իմ ցորենապաշտ,
Իմ հի՛ն հայրենիք:
Դու՛ կապույտ, կապույտ երազի նշխար,
Իմ խղճի սափոր, իմ հավատի տենչ,
Իմ կյանքի միակ կուռք ու խնդություն,
Խավար օրերի փրկություն միակ,
Անցած հուշերի լուսե արահետ,
Անեղծ ու վճիտ մայրական հայացք,
Հայրական խրատ...եւ տուն ու տանիք,
Իմ ցորենագույն, իմ ցորենապաշտ,
Իմ հի՛ն հայրենիք:*

Արմեն Ավր

ԳԱՎԱՌԻ ԶԻԱՐԱԹ ՄԱՏՈՒՑ-ՍՐԲԱՏԵՂԻՆ

Հնասեր Թաթուլ Տոնոյանի եւ խաչքարագետ Սեւակ Արեւշատյանի ուղեկցությամբ շարունակում ենք մեր ուսումնասիրությունները Գեղարքունիքի մարզի պատմամշակութային հուշարձանների տարածքներում՝ նոր արժեքներ բացահայտելու ակնկալիքով:

Հերթական այցը կատարեցինք Զիարաթ կոչվող մատուռ-սրբատեղիում:

Զիարաթ մատուռ-սրբատեղին գտնվում է Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Ծաղկաշեն գյուղից շուրջ 3 կիլոմետր դեպի հյուսիս-արեւմուտք ընկած հեռավորությամբ, բարձրադիր բլրի գագաթին, ծովի մակերևույթից շուրջ 2300 մետր բարձրության վրա: Իսկ Գավառ քաղաքի Հացառատ թաղամասից հեռավորությունը կազմում է շուրջ 11-12 կիլոմետր:

Այս սրբատեղի այցելում են Գավառ համայնքի բազմաթիվ ուխտավորներ, սակայն համարում են, որ այն հիմնականում Հացառատի բնակիչների ավանդական սրբավայրերից է:


Քառանկալ ու միագմբեթ մատուռը կառուցվել է 2011 թվականին, Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի բնակիչ Աշոտ Դաբադյանի բարերարությամբ եւ Արտավազդ Թեմուրյանի ճարտարապետությամբ:



պետությամբ: Նորակառույց այս շինությանը կից պահպանվել է հին մատուռը, որը նորոգվել կամ վերակառուցվել է 19-20-րդ դարերի ընթացքում:

/շարունակությունը՝ էջ 5-ում/

ԾԱՂԿԱՇԵՆԻ «ՀԱՄԲՈՅԻ ԶԳԵՍՎՈՐ» ՀՆԱՎԱՅՐ-ՍՐԲԱՏԵՂԻՆ



Այստեղ ամառը մեղմ ու հով է, ձմեռը՝ խստաշունչ, ձնառատ ու տեսական: Հրաշագեղ բնությամբ այժի ընկնող այս վայրում շատ երեւելի է նաեւ Սուրբ Հովհաննես եկեղեցին, որը համարվում է 9-10-րդ դարերի կառույց: Քառանկալ այս եկեղեցու ճարտարապետական արտաքին տեսքը կարելի է Գեղարքունիքի մարզում այդ ժամանակներում կառուցված եկեղեցիների մեջ բացառիկներից մեկը համարել, քանի որ այն կառուցված է ոչ թե սրբատաշ, այլ ամնշակ, ճեղքված քարերով, ինչն առանձնակի շուք է տալիս կառույցին ու հիմնականում պահպանված է մնացել ավելի քան հազար տարվա ընթացքում:

Շքեղ են նաեւ եկեղեցու խորանի բեմի ճակատային մասում ագուցված հսկայան խաչքարը, որը փոխարինում է մի ամբողջ պատի ու իր ոճով նմանվում է 16-րդ դարում կերտված խաչքարերին, ինչպես նաեւ՝ բակի մի շարք խաչքարերն ու խաչքարաբեկորները, որոնք իրենց ոճով նման են 9-10-րդ դարերի խաչքարերին:

Ծաղկաշենի սուրբ Հովհաննես եկեղեցին, այդ զբոսաշրջային տեսանկյունից համարվում է այս գյուղի հիմնական այցեքարտը, ու զբոսաշրջիկներն առաջինը հրապուրվում են վեհաշուք այս կառույցով՝ շատ դեպքերում երկրորդելով մյուս հնավայրերն ու հուշարձանները, որոնք գտնվում են գյուղի հյուսիսում, հենց նույն եկեղեցու դիմաց, մի քանի հարյուր մետր հեռավոր ընդամենը:

Ծաղկաշենի հյուսիսային կողմը երիզող ժայռախմբերի ներքո էլ տարածվում են այդ հնավայրերը, որոնցից մեկը «Թուխ Մանուկ» սրբավայրն է, մյուս երկուսը՝ «Համբոյի ճգնավոր» եւ «Աբրոյի ճգնավոր» կոչվող սրբատեղիները:

Առաջին հայացքից ամայի թվացող այս վայրում, սակայն, հոգեւոր հզոր գանձեր կան թաքնված, որոնք անձանոթ մարդու աչքին դժվար թե այդչափ նկատելի լինեն:

Թե ինչու են սրանք կոչվում սրբատեղիներ, այդ մասին անխոս կվկայեն այն հոյակերտ խաչքարերը, որոնք կերտվել են 9-14-րդ դարերի ընթացքում ու հրաշքով պահպանվել մինչ այժմ:

Ժամանակի սղության պատճառով մենք հասցրինք ծանոթանալ միայն «Համբոյի ճգնավոր» սրբավայրին ու նրա շրջակայքի քարանձավային բնակարաններին, որոնք պարզապես ապշեցուցիչ էին, անասելի տպավորող:

/շարունակությունը՝ էջ 4-ում/

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲՈՒԺ-ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀԵՏ

Դեկտեմբերի 5-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը խորհրդակցություն անցկացրեց մարզի առողջության առաջնային պահպանման նշանակության բուժօգնականների տնօրենների հետ: Խորհրդակցությանը մասնակցեցին Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանը, մարզպետի աշխատակազմի աշխատակիցներ:

Մարզի առողջության առաջնային պահպանման նշանակության բուժօգնականներում Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կողմից 2025 թվականին իրականացված ուսումնասիրությունների արդյունքների, առաջնահերթ խնդիրների ու առաջիկա անելիքների մասին զեկուցեց Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական հարցերի վարչության պետ Լուսինե



Վարդանյանը, ֆինանսական հատկացումների եւ ծախսերի արդյունքների մասին մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Յուրա

Մուշեղյանը: Մարզպետ Կարեն Սարգսյանն անդրադարձավ առողջության առաջնային պահպանման նշանակության բուժօգնականներում 2025 թվականին անցկացված առողջության արդյունքում արձանագրված խախտումներին ու թերություններին, բուժօգնականների տեսչական վերազինման, պետությունների իրականացման, շինարարական աշխատանքների վերահսկման, կատարողական կարգապահության հետ կապված խնդիրներին:

Կարեն Սարգսյանի հավաստմամբ՝ ՀՀ կառավարության աջակցությամբ ու բուժօգնականների խնայված միջոցների հաշվին մինչև 2026 թվականի փետրվար ամիսը մարզի բոլոր բուժամբուլատորիաները եւ ԱՄԿ-ները կվերազինվեն ժամանակակից բուժսարքավորումներով, ինչի շնորհիվ էապես կբարելավվի բուժապասարկման որակը առողջության առաջնային պահպանման օղակում: Խորհրդակցությունն ամփոփվեց հարցուպատասխանի ձևաչափով: Խորհրդակցության ավարտին մարզպետ Կարեն Սարգսյանը հանձնարարեց սահմանված ժամկետներում վերացնել 2025 թվականին անցկացված առողջության արդյունքներով արձանագրված բոլոր խախտումներն ու թերությունները, բարձրացնել աշխատանքային կատարողական կարգապահությունը, վերահսկել իրականացվող շինարարությունների ընթացքը: **Գեղամա աշխարհ**

«ԵՐԱԶԱՆՔԻ ԱՅԳԻ» ԾՐԱԳՐԻ ԾՐԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՓՈԽԸՄԲՈՒՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ԵՄ «Կանաչ շաբաթ-2025» նախաձեռնության շրջանակում ԵՄ-ն եւ Գերմանական Միջազգային Համագործակցության Ընկերությունը կազմակերպել էին հուշագրերի ստորագրման արարողություն՝ ներկայացնելու «Արեւելյան գործընկերության երկրներում դեկարբոնիզացման, կլիմայի դիմակայունության եւ էներգետիկ անվտանգության» ծրագրի աջակցությամբ մեկնարկող նախաձեռնությունները: Միջոցառման ընթացքում Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը եւ «Բլեջան» ՀԿ ներկայացուցիչը ստորագրել են համագործակցության հուշագիր «Երազանքի այգի. կլիմայակայուն քաղաքային այգու հիմնում Գավառում» նախագծի իրականացման համար:

Ծրագրի մեկնարկը տրվել է 2025 թվականի հոկտեմբերի 1-ից եւ կավարտվի 2027 թվականի սեպտեմբերին: Ծրագրի բյուջեն կազմում է 582 հազար 913 եվրո, որի 5 տոկոսը՝ 30 հազար եվրոյի չափով, ներդրում է Գավառի համայնքապետարանը: Միջոցառմանը ներկա էին Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսը, ՀՀ նախարարությունների, Գերմանական միջազգային համագործակցության ընկերության եւ մի շարք գործընկերների ներկայացուցիչներ: Ծրագիրը համաֆինանսավորվում է եվրոպական Միության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Երջակա միջավայրի, կլիմայական գործողությունների եւ բնության պահպանության նախարարության կողմից:



Ավարդ Մանուկյան

Նախագիծը նպատակ ունի ստեղծել համայնքային այգի շուրջ մեկուկես հեկտար տարածքի վրա, բնահեն լուծումներով, որոնք կմեծացնեն կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականությունը եւ կբարելավեն քաղաքի միկրոկլիման:

Ավարդ Մանուկյան

«ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ-Ի «ԱՆԵՎԱՄԱՐ» ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ԾԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՏԱՌԱՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

«Սեւան» ազգային պարկ-ի «Սեւան» մասնաձյուղի «Ախթամար» տեղամասում շարունակվում են անտառավերականգնման աշխատանքները 5 հեկտար տարածքում: Ինչպես տեղեկացրին «Սեւան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ից, ծրագրվում է տնկել շուրջ 12.000 տնկի՝ հացենի, թխկի, տանձենի, բարդի եւ ուռեմի տեսակների: Ընթացող անտառավերականգնման աշխատանքներին տեղում հետեւել է ՀՀ Երջակա միջավայրի նախարարի տեղակալ Արամ Մեյմարյանը: Անտառավերականգնման աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի նոյեմբերի երկրորդ տասնօրյակի ընթացքում: Դեկտեմբերի 12-ի դրությամբ արդեն տունկի աշխատանքներն ավարտված են: -Աշխատանքները կարելու էր դրոնում են տարածքի անտառահատվածների վերականգնման, էկո-



համակարգի վերաստեղծման եւ Սեւանի ավազանի բնապահպանական կայունության ամրապնդման գործում: Անտառային տարածքները կարելու էր ունեն հողի երոզիայի կանխման, ջրային պաշարների կարգավորման եւ մթնոլորտի մաքրման գործում դառնալով կենսաբանական բազմազանության ապաստարան եւ բնական ռեսուրսների վերարտադրության մասնակից: Անտառների պահպանությունն ու վերականգնումը համընդհանուր բնապահպանական առաջնահերթություն է, որի շարունակական իրականացումը ուղղված է կայուն ու առողջ միջավայրի ձեւավորմանը՝ հանուն ապագա սերունդների.-ներկայացրեց «Սեւան» ազգային պարկ» ՊՈԱԿ տնօրեն Կարեն Մնացականյանը: **«Գեղամա աշխարհ»**

ՍԵՎԱՆ ԲԱՂԱՔՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ



Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքում «Մասնակցային բյուջետավորում-2025» ծրագրի շրջանակներում մեկնարկել են խաղահրապարակի կառուցման աշխատանքները: Ինչպես տեղեկացրին Սեւանի համայնքապետարանի աշխատակազմից, Սեւան քաղաքի Սայաթ-Նովա փողոց թիվ 18, 20 շենքերի հարակից տարածքում մեկնարկել են մասնակալական խաղահրապարակի կառուցման աշխատանքները: Այս ծրագիրը մասնակցային բյուջետավորման գործընթացի արդյունքում հաղթող ճանաչված ծրագրերից մեկն է, որի պայմանագրային արժեքը

կազմում է 4 միլիոն 440 հազար դրամ: Ծրագրի շինարարական աշխատանքներն իրականացվում են «Ռե Ե 3 Բոնսթրաք Ե Զ Զ Ն» ՍՊԸ-ի կողմից: Ներկայումս ընթացում են հողաշինական եւ տարածքի հարթեցման աշխատանքները: Այս ծրագրի արդյունքում սեւանցի փոքրիկները կունենան եւս մեկ խաղահրապարակ, որի անհրաժեշտությունն այդ տարածքում զգացվում էր երկար տարիներ: Հիշեցնենք, որ 2025 թվականին Սեւան համայնքում մեկնարկել են իրականացվում է մասնակցային բյուջետավորման գործընթացը, որը լավագույն հարթակ է համայնքի բնակիչների կողմից բարձրաձայնելու համայնքում առկա խնդիրները եւ ներկայացնելու առաջարկ-նախագծեր դրանց լուծման համար: **Արմինե Ղուկասյան**

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՎԱՐՏՎԵԼ Է ԿԱՐՏՈՑԻԼԻ ԵՎ ԿԱՂԱՄՐԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ

2025 թվականի նոյեմբերի առաջին կեսի դրությամբ Գեղարքունիքի մարզում ավարտվել է կարտոֆիլի եւ կաղամբի բերքահավաքը: Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչությունից, մարզի տնտեսություններում առկա 5500 հեկտար կարտոֆիլի ցանքերից հավաքվել է շուրջ 102 հազար 730 տոննա կարտոֆիլի համախառն բերք՝ հեկտարից 18,6 ցենտներ միջին բերքատվությամբ: Ավարտվել է նաեւ կաղամբի ու բանջարբու-

ՎԱՐԻԱԶՈՐՈՒՄ ՀԻՄՆԱՆՈՐՈՎԵԼ Է 3 ՓՈՂՈՑ ԵՎ 1 ՓՈՂՈՑԻ ՓԱԿՈՒՂԻ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդաձոր գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հիմնանորոգվել է 3 փողոց եւ 1 փողոցի փակուղի: Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Վարդաձորի փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 77 միլիոն 222 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը: Ծրագրով նախատեսված է Վարդաձոր գյուղի 3-րդ, 19-րդ 28-րդ փողոցների եւ Ալաշկերտ փողոցի 6-րդ փակուղու ասֆալտապատում՝ 1280 գծամետր ընդհանուր երկարությամբ եւ 6400 քառակուսի մետր մակերեսով: Երկարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի հոկտեմբերի վերջից եւ նոյեմբերի 28-ի

տանային մյուս մշակաբույսերի բերքահավաքը, ինչի արդյունքում հավաքվել է շուրջ 13 հազար 369 տոննա կաղամբի, ծաղկակաղամբի, բրոկոլիի, լոլիկի, բազուկի, այլ մշակաբույսերի համախառն բերք: Ավարտված է համարվում նաեւ պտղի բերքահավաքը՝ շուրջ 8310 տոննա նախնական արդյունքով: Բերքահավաքն անցել է անկորուստ, քանի որ այդ ընթացքում մարզում ցրատահարությունների դեպքեր չեն գրանցվել: **«Գեղամա աշխարհ»**



ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՊՐՈՑԱԿԱՆԸ ԲՈՒՂԱՐԻԱՅՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏՈՒԳԱՏԵՍՈՒՄ ԶԲԱՂԵՑՐԵԼ Է ԱՌԱՋԻՆ ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար գյուղի միջնակարգ դպրոցի իններորդ դասարանի աշակերտ Գրիգոր Մինասյանն առաջին մրցանակով է տուն վերադարձել Բուլղարիայի Վառնա քաղաքում վերջերս կայացած միջազգային մրցույթ-փառատոնից:

Գրիգոր Մինասյանը Մարտունի համայնքում գործող «Հակոբ Հակոբյան» վոկալ ստուդիայի սան է: Նա առաջին տեղ է զբաղեցրել «Փոփ վոկալ» անվանակարգում: Վոկալի ուսուցչուհին է Արփինե Սարգսյանը:

Միջազգային բեմում Հայաստանի Հանրապետության ու Մարտունի



համայնքի պատվը բարձր պահելու համար Գրիգոր Մինասյանն արժանացել է Մարտունու համայնքապետարանի շնորհակալագրին:

«Բազմաթիվ երկրների պատանի երգիչների միջև անցկացվող ստուգատեսում մեր համայնքի ներկայացուցիչը փայլուն է հանդես եկել՝ արժանանալով առաջին մրցանակի, ու այդ նվաճումը հպարտացնում է բոլորիս: Մասնագետները նրան խոստումնալից ապագա են կանխատեսում,- ներկայացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՄ ՄԱՐԶՈՒՄ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՁՄԵՌԱՅԻՆ ՄՊԱՍԱՐԿՄԱՆԸ



խատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ Գեւորգ Խաչատրյանը Գեղարքունիքի մարզում ճանապարհների ձմեռային պահպանություն եւ սպասարկում իրականացնող կազմակերպություններում ծանոթացել են նախապատրաստական աշխատանքների կազմակերպման ընթացքին:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից, սպասարկող կազմակերպությունները ձմեռային ծանախատվածում ճանապարհների ձմեռային պահպանություն եւ սպասարկում պետք է իրականացնեն 610 կիլոմետր երկարության միջպետական, հանրապետական եւ մարզային նշանակության ճանապարհներին: Գնահատականները ձմեռային պահպանության եւ սպասարկման աշխատանքներում ներգրավված են 7 կազմակերպություն:

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի համձնարությամբ վերջերս մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանը եւ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի

պահպանության եւ սպասարկման աշխատանքներում ներգրավված են 7 կազմակերպություն: Ձմեռային պահպանության ենթակա ճանապարհ-

ները սպասարկելու համար ներգրավման պատրաստ են 17 գրեյդեր, 20 կոմբինացված ճանապարհային մեքենաներ, 21 ձնամաքրող այլ տեխնիկաներ, 25 բեռնատար մեքենաներ:

Սպասարկող կազմակերպություններում կուտակվել է շուրջ 9300 խորանարդ մետր ավազ եւ 293 տոննա աղ: Բոլոր տեղերում արդեն ձեւավորվել է հերթապահություն՝ ճանապարհների ձմեռային պահպանության եւ սպասարկման աշխատանքները կազմակերպելու եւ իրականացնելու համար:

«Ուսումնասիրության արդյունքներով՝ ճանապարհների ձմեռային պահպանություն եւ սպասարկում իրականացնող կազմակերպությունները լիովին պատրաստ են ձմեռային շրջանի մեկնարկին,- հավաստեցին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից:

Միջպետական, հանրապետական ու մարզային նշանակության ճանապարհների ձմեռային պահպանությունը եւ սպասարկումը ամբողջությամբ իրականացվում է պետբյուջեի միջոցների հաշվին:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՄ ՄԱՐԶԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄՐ ՀԱՂԹՈՂ Է ՃԱՆԱԶՎԵԼ «ՀՀ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ ԱՌԱՐԿԱՅԻՑ ՍՏՈՒԳԱՏԵՍ» ՄՐՑԱՇԱՐՈՒՄ:

«ՀՀ դպրոցականների շրջանում ֆիզկուլտուրա առարկայից ստուգատես» մարզական միջոցառմանը մասնակցում են Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցների 1-6-րդ դասարանների աշակերտները:

Միջոցառումը կազմակերպում եւ անցկացնում է «Աշխատանքային ռեզերվներ» մարզական հասարակական կազմակերպությունը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ: Այն անց է կացվում չորս փուլով, որոնցից 1-3 փուլերն արդեն անցկացվել էին՝ 2024-2025 ուսումնական տարվա ապրիլ-մայիս ամիսներին:

Մրցումների ծրագրում ընդգրկված են՝ վազք 60 մետր՝ բարձր մեկնարկից, վազք 500 մետր, հեռացատկ թափավազքից, ձգումներ կախ դրոշմից՝ տղաներ, ձեռքերի ծալումներ եւ ուղղումներ, պառկած հենադրությունից մարզանստարանին՝ աղջիկներ, թենիսի գնդակի նետում թափավազքից:

Ծրագիրը կազմված է 1-3-րդ եւ 4-6-րդ դասարանների համար:

1-3-րդ դասարանիցները մասնակցում են ներդպրոցական, համայնքային եւ մարզային փուլերին, իսկ



4-6-րդ դասարանիցները նաեւ եզրափակիչ փուլին: Եզրափակիչ փուլում 4-6-րդ դասարանիցների համար անցկացվում է նաեւ զվարճալի վազքահերթ եւ փոխանցումավազք մարզական մրցումները:

մար անցկացվում է նաեւ զվարճալի վազքահերթ եւ փոխանցումավազք մարզական մրցումները:

Միջոցառման եզրափակիչ փուլն անցկացվել է 2025 թվականի նոյեմբերի 20-ին, որտեղ Գեղարքունիքի մարզի հավաքական թիմը ներկայացրել են մարզային փուլում հաղթող ճանաչված 4-րդ դասարանիցների մրցապայքարում՝ Վերին Գետաշենի թիվ 1 միջնակարգ (ֆիզիկա Ռուբիկ Սուրդյան), 5-րդ դասարանիցների մրցապայքարում՝ Մարտունու Մ. Մելիք-Շահումյանի անվան թիվ 1 հիմնական (ֆիզիկա Հակոբ Ջիվանյան) եւ 6-րդ դասարանիցների մրցապայքարում՝ Գավառի Պ. Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ (ֆիզիկա Ստյոպա Սարգսյան) դպրոցների թիմերը:

Ծավալված հետաքրքիր եւ անզիջում պայքարում մարզի հավաքական թիմը գրավել է առաջին տեղը՝ արժանանալով մրցաշարի հաղթողի կոչմանը:

Հավաքական թիմը պարզեւտրվել է զավաթով եւ հավաստագրով, իսկ թիմի անդամները՝ հավաստագրերով եւ մեդալներով:

Գեղամա Չարվադարյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԻՑ ԱՆՎԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՓՈՒԼԸ



ընթացում է 2025 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ կատարվել է 13 հազար 318,3 հեկտար աշնանացան ցորենի ցանք:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչությունից, ներկա դրությամբ աշնանացանի ծավալները Գեղարքունիքում ավելի քան 3024 հեկտարով գերազանցում են նախորդ տարվա ցուցանիշը:

Կատարված ցանքերի մեծ մասը՝ 9683,9 հեկտարը, բաժին է ընկնում Վարդենիս համայնքի տնտեսություններին: Գավառ համայնքում կատարվել է 1578, Սեւան համայնքում՝ 665, Մարտունու համայնքում՝ 979,2, ճամբարակ համայնքում՝ 412 հեկտար աշնանացան ցորենի ցանք:

13 հազար 318,3 հեկտար ցանքերից 8390,9 հեկտարը ցանվել է պետության կողմից հավաստագրված սերմերով, ՀՀ կառավարության կողմից իրականացվող «Բուսաբուծության աջակցության ծրագրի» շրջանակներում:

«Ծրագրին դիմած շահառուների քանակն 1147 է: Իսկ աշնանացանի ծավալների ավելացումը հիմնականում կապված է «Բուսաբուծության աջակցության ծրագրի» ներդրման հետ, ինչ շահագրգռել է բազմաթիվ տնտեսություններին: Հավելեն, որ ծրագրին դիմելու դեպքում շահառու կատարված 1 հեկտար ցանքի համար ստանալու է 80 հազար դրամի փոխհատուցում: Վարդենիս համայնքի փոխհատուցումը էլ փորձական կարգով կատարվել է 1 հեկտար աշնանացան գարու ցանք,- ներկայացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչությունից:

Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցներում արդեն ավարտվել են ՀՀ դպրոցականների 2025-2026 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադայի ներդպրոցական փուլի աշխատանքները:

Օլիմպիադայի մասնակցելու նպատակով մարզում հայտագրվել է 10945 աշակերտ, որից 1173-ը հայոց լեզու, 821-ը՝ հայ գրականություն, 1237-ը՝ մայրենի, 857-ը՝ պատմություն, 2807-ը՝ մաթեմատիկա, 433-ը՝ ֆիզիկա, 14-ը՝ աստղագիտություն, 579-ը՝ կենսաբանություն, 204-ը՝ ինֆորմատիկա, 364-

դան անցկացվում է առցանց եղանակով, իսկ մայրենին՝ գնահատվում է տեղում, առանց ձեւաթղթի, հարցման միջոցով:

Առարկայական օլիմպիադայի ներդպրոցական փուլի արդյունքներն այժմ ամփոփվում են Հանրապետական կազմկոմիտեի կողմից: Լավագույն արդյունք ցուցաբերած դպրոցականները իրենց գիտելիքները կստուգեն նաեւ օլիմպիադայի մարզային փուլի ընթացքում:

Համբարձում Սաֆարյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՄ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼ Է 13 ՀԱՋԱՐ 318,3 ՀԵԿՏԱՐ ԱՇՆԱՆԱՅԱՆ

Գեղարքունիքի մարզի տնտեսություններում 2025 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ կատարվել է 13 հազար 318,3 հեկտար աշնանացան ցորենի ցանք:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչությունից, ներկա դրությամբ աշնանացանի ծավալները Գեղարքունիքում ավելի քան 3024 հեկտարով գերազանցում են նախորդ տարվա ցուցանիշը:

Կատարված ցանքերի մեծ մասը՝ 9683,9 հեկտարը, բաժին է ընկնում Վարդենիս համայնքի տնտեսություններին: Գավառ համայնքում կատարվել է 1578, Սեւան համայնքում՝ 665, Մարտունու համայնքում՝ 979,2, ճամբարակ համայնքում՝ 412 հեկտար աշնանացան ցորենի ցանք:

13 հազար 318,3 հեկտար ցանքերից 8390,9 հեկտարը ցանվել է պետության կողմից հավաստագրված սերմերով, ՀՀ կառավարության կողմից իրականացվող «Բուսաբուծության աջակցության ծրագրի» շրջանակներում:

«Ծրագրին դիմած շահառուների քանակն 1147 է: Իսկ աշնանացանի ծավալների ավելացումը հիմնականում կապված է «Բուսաբուծության աջակցության ծրագրի» ներդրման հետ, ինչ շահագրգռել է բազմաթիվ տնտեսություններին: Հավելեն, որ ծրագրին դիմելու դեպքում շահառու կատարված 1 հեկտար ցանքի համար ստանալու է 80 հազար դրամի փոխհատուցում: Վարդենիս համայնքի փոխհատուցումը էլ փորձական կարգով կատարվել է 1 հեկտար աշնանացան գարու ցանք,- ներկայացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչությունից:

«Գեղամա աշխարհ»



ԳԵՂԱՍՍ 4

ԾԱՂԿԱՆՆԵՐԻ «ՆԱԲՈՅԻ ԶԳԵՄՎՈՐ» ՆՆԱՎԱՅՐ-ՍՐԲԱՏԵՂԻՆ

/սկզբը էջ 1-ում/
Թե ինչու է տեղանքը ստացել «Յամբոյի ճգնավոր» անունը, ծաղկաշենցի Գառնիկ Սարգսյանը բացատրում է այսպես. անցած դարի ընթացքում այդ վայրում ապրել է Յամբարձուն անունով մարդ, ով հետո բնակության է տեղափոխվել մայրաքաղաք կամ Արարատյան դաշտ:

«Յամբոյի ճգնավորը» մի տարածք է, որտեղ մարդն ակամայից առնչվում է պատմական գանձազան դարաշրջաններին՝ հեռավոր նախնադարից մինչև նորագույն ժամանակները, մարդկային կյանքի բարդ ընթացքին, մարդու կողմից ստեղծված արվեստի գլուխգործոցներին:

Այլեցուցիչ է «Յամբոյի ճգնավոր» սրբավայրի մի քանի մետր քառակուսի զբաղեցնող տարածքը, որտեղ, հսկա ժայռի երկու կողմերում պահպանված կիսավեր շինության մեջ հանգրվանել են երեք հույակերտ խաչքար, նույնքան խաչքարաբեկոր ու մի կոթող, որը, անխոս, կերտվել է քրիստոնեական մշակույթից առաջ, ամենայն հավանականությամբ, հեթանոսական դարաշրջանում:

Կլորավուն կոթողի վերին հատվածում պատկերված է արեւի սկավառակը, իսկ գլխին շրջանաձև փոս է արված, որտեղ, ամենայն հավանականությամբ, հագել է այդ կոթողի մեկ այլ տարր: Սրա մեջ անվարան կարելի է նկատել արեւապաշտության գաղափարը:

Խաչքարերից երեքը, որոնք ունեն կես մետրից ավելի բարձրություն, համարվում են իններորդ դարի կերտվածքներ, իսկ կարմիր տուֆի վրա կերտված



խաչքարաբեկորները իրենց ոճով նման են 12-րդ դարում կերտված խաչքարերին: Խաչքարագետ Սեւակ Արեւշատյանի պնդմամբ այդ դարաշրջանում պատրաստված նման ոճի խաչքարերն անսովոր են Գավառի տարածաշրջանի մշակույթին, քանի որ չունեն լայն տարածվածություն: Հավանաբար, դրանք կան բերվել են այլ տեղանքից, կամ խաչքարագործ վարպետն է եղել այլ ոճի կրող, այլ տեղանքի մարդ:

Իսկ առավել ապացուցիչը նույն հսկա ժայռի վրա քանդակված երեք մեծ ու մի քանի փոքր չափերի խաչերն են՝ անջինջ ու դարերում շնչող ժայռախաչերը:

Այս հրաշքից քիչ հեռու մեր դեմ բացվում է մեկ այլ հրաշք՝ քարանձավային բնակարանների համալիրը: Ժայռերի խոռոչում մարդիկ բնակարան են ստեղծել անհիշելի ժամանակներից բաց տեղերը փակելով քարերի շարվածքով: Ընդ որում, հստակ երեւում են ինչպես նախնային, այնպես էլ նորագույն պատերի հետքերը: Քարանձավային բնակարաններից մեկի վրա դուռ կա տեղադրած, ներսում հին կահույք կա, իսկ վառարանի ծխնելույզը դուրս է հանված փոքրիկ լուսամուտից: Սա խոսում է այն մասին, որ, եթե ոչ այժմ, ապա ոչ վաղ անցյալում էլ մարդիկ ձմեռան դաժան եղանակի կամ ամռան տապի ժամերին ապավինել են քարանձավների հուսալիությամբ:

Քարանձավային այս բնակատեղիից մի քանի տասնյակ մետր ներքե Գեղիձոր գետն է հոսում, որը քրի անսպառ պաշար է ծառայել բնակիչների համար, իսկ շրջակայքում անսահմանափակ արոտներն ու դաշտերն են, որոնք հիանալի միջոց են եղել հողագործության ու անասնապահության համար:

Խորհրդավոր այս վայրի արժեքներին ինձ բախտ վիճակվեց ծանոթանալ հնասեր Թաթուլ Տոնոյանի շնորհիվ, ում հետ ծրագրում ենք առաջիկայում մասնակրկիտ ուսումնասիրություն անցկացնել նաեւ Ծաղկաշենի մյուս հնավայրերում:

Խոսքով Խլղաթյան

ԱՂՋԻԿ-ՏՂԱՅԻ ՔԱՐԸ



Աղջիկ-տղայի քարը գտնվում է Գեղարքունիքի մարզի Հայրավանք գյուղից 1 կիլոմետր դեպի արեւմուտք, Երեւան-Գավառ-Մարտունի Վարդենիս նախկին ավտոխճուղու ձախակողմյան հատվածում: Մինչ 1980-ական թվականները, երբ դեռ գործում էր խճուղին, նրա ուղիղ հարեւանությամբ էլ աղբյուրը, ճաշարանը, կաթնարտադրության համալիրը, գեղաքանդակ այս խաչքարի տեսքով ու նրա շուրջ պահպանված ավանդազրույցով հետաքրքրվում էին բազմահազար ուղեւորներ, ովքեր կանգառ էին կատարում այս վայրում, կատարում իրենց ուխտը, հագեցնում ծարավը կամ քաղցը, իսկ, այսպես ասած, Աղջիկ-Տղայի քարն էլ միշտ, գիշեր թե ցերեկ, իր երկրպագողների բանակն էր ունենում:

Իրավիճակը միանգամայն փոխվեց, երբ 1980-ական թվականներին շահագործման հանձնվեց մայրաքաղաքից դեպի Սեւան-Գավառ-Մարտունի-Վարդենիս տանող նոր երթուղին, ու Աղջիկ-Տղայի քարն արդեն կորցրեց անհաշիվ երկրպագուների իր բանակը՝ մնալով լոկ գեղեցիկ հուշ մարդկանց գրույցներում: Իսկ երբ ԽՍՀՄ փլուզման հետեւանքով լուծարվեց նաեւ անասնապահական խոշոր համալիրը, փակվեց ճանապարհամերձ ճաշարանը, տարածքը լքվեց ու դարձավ ամայի մի վայր, որտեղ միայն երեւում էին անասնապահ ու հողագործ մարդիկ: Ցամաքեց ու քանդվեց նաեւ գեղեցկատես հուշադրույրը, որից ուխտավորի սրտով ջուր էին բազմահազար ուղեւորները:

Աղջիկ-Տղայի քարը, պարզվում է, մինչ նախորդ դարի երկրորդ կեսը եղել է մասամբ կտրված, բեկորները տեղում ընկած: Այդ մասին է վկայում Սեղրակ Բարխուդարյանն իր «Դիվան հայ վիճագրության» կոթողային աշխատության մեջ:

«Խաչքար, մեծ եւ գեղաքանդակ, կանգնած է խճուղու եզրին, նորաշեն աղբյուրի եւ ճաշարանի մոտ, որտեղից ճանապարհները խճուղուց բաժանվում են դեպի Լճափ եւ Բերդկունք գյուղերը: Իր տեղումն է պատվանդանը եւ նրա վրա խաչքարի ստորին մասի մի փոքր կտոր. վերելի մեծ մասը մի քանի կտորներով ընկած է շուրջը, մի մեծ բեկորի վրա, որը խաչքարի հյուսիսային կողմն է, մնացել է 11 կարճ, եւ մի փոքրի վրա, որը վերին մասն է՝ 2 տող, մնացածը՝ խաչքարի տակ եւ պատվանդանի վրա. «Ի թիվս ԶԻԳ 71274/ եւ ՍՈՒՍԱՅՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԶԻԱՍՍ

ՈՐՔ ԵՐԿԻՐ ԴՍԳԱՆԷՔ ԱՍՏՎԱԾ ՈՂՈՐՄԻ ԱՍՍՅԵՔ ԻՆՁ ԵՎ ԾՆՈՂԱՑ ԻՍՈՑ»:

Ծանոթություն՝ կողի վերելի մասում գրիչը թվակառնը ջնջել է եւ նոր տողից գրել:

Հրատարակիչներն անձնանունը վերծանել են՝ Սնբատյանցը՝ Աբուսալմ, Լալայանը՝ Աբուսալմայս. գրերի պահպանված մասերի տեղադրությունից երեւում է, որ անվան սկզբի Աբուսալմ մասի համար տեղ չկա. այդտեղ ընդամենը մեկ տառի տեղ կա. կարծում ենք, որ պարզապես Մուրատս պետք է լիներ, եւ գրիչը Մուրատայս է գրել, ինչպես ուրիշ շատ դեպքերում»,- եզրակացնում է Բարխուդարյանը:

Այս խաչքարը, փաստորեն, հետագայում, 1960 կամ 70-ական թվականներին է ամբողջացվել՝ իրար միացվելով կտրված բեկորներով:

Աղջիկ-Տղայի քարի հետ կապված գրույցի մասին մարդիկ պատմել են բերնեբերան, սերնդեսերունդ: Ի դեպ, այս խաչքարին տվել են նաեւ «Հազախաչ» անվանումը, անվանում, որը կրում են նաեւ ինչպես Գավառի, այնպես էլ մեր մարզի այլ տարածքների որոշ խաչքար-տապանաքարեր: Սա նշանակում է, որ այս ավանդազրույցը գալիս է մարդկային կյանքի շատ ավելի հեռավոր ժամանակներից՝ հուզմունքով ու սիրով ընդունվելով սերունդների կողմից, մանավանդ որ այս խաչքարի շրջակայքում նկատվում են հնագույն դամբարանի հետքեր:

Ըստ ավանդության խազախաչի տակ թաղված են երկու ծաղկահասակ սիրեցյալներ: Ժուկով-ժամանակով իրար են սիրահարվում այդ կողմերում ապրող քահանայի աղջիկն ու մի քաջ, գեղեցիկ տղա: Մեր քաջ տղան, սակայն, աղքատ է եղել, եւ քահանան հրաժարվել է նրա հետ ամուսնացնել իր աղջկան: Եվ ահա տղան որոշում է փախցնել աղջկան:

Քահանան, իմանալով այս որոշման մասին, ծուղակ է պատրաստում տղայի համար: Նրան ասում է, որ ինքը պատրաստ է օրհնել նրանց միությունը՝ պայմանով, որ տղան մեկ օրում «Թափի գլխի» արտը հնձի, վերջացնի:

Սա անկարելի բան էր, արտը ախր շատ մեծ էր: Բայց տղան չի հուսալքվում: Նա գիշերը գերանդին սրում է եւ առավոտ կանուխ սկսում է երգելով արտը քաղել:

Երբ մութն արդեն սկսում է ընկնել, տղան գրեթե վերջացրած է լինում իր գործը: Այդ ժամանակ պառավը, որ քահանայի հրամանով հետեւում էր տղային, շտապում է քահանային իմաց տալ գործի վիճակի մասին:

Քահանան, որպեսզի ինքն իր խոսքի գերին չդառնա, պառավի միջոցով տղային տուտ լուր է ուղարկում՝ իբր աղջիկը հանկարծակի մահացել է:

Այս վատ լուրը լսելուն պես տղայի սիրտը կանգ է առնում եւ նա ընկնում է այն նույն տեղը, ուր այսօր կանգնեցված է խազախաչը:

Իսկ աղջկան քահանան ասում է, թե իբր տղան չի կարողացել ավարտել արտի հունձը, ուժասպառ է եղել եւ տեղում մահացել:

Սա լսելուն պես աղջիկը իրեն նետում է լիճը եւ խեղդվում:

Միայն այս դեպքում քահանան ուշքի է գալիս եւ հասկանում, թե որքան չար գտնվեց երկու սիրավառ հոգիների հանդեպ:

Նա լճից հանում է աղջկա դին եւ հողին հանձնում նույն գերեզմանում տղայի կողքին:

Այդ գիշեր բոլոր գյուղացիները տեսիլք են ունենում: Նրանց հայտնվում է Սուրբ Նշանը՝ ծերունու կերպարանքով եւ պատգամում, թե ով հազի ցավ ունենա, թող գնա այդ երկու ջահելի գերեզմանը համբուրի, նրանց ողորմի տա, եւ հազը կկտրվի:

Հազախաչը սիրահար զույգերին օգնում է, որ հասնեն իրար: Այն նաեւ սիրահարների պահապան Սուրբն է:

Աղջիկ-Տղայի քարից դեպի արեւմուտք, դեպի Գեղամա լեռնավահան ձգվող սարավանդի վրա նկատվել են հնագույն բնակատեղիների ավերակների հետքեր:

Խոսքով Խլղաթյան

ՀԱՅՐԱՎԱՆԻ ԿՈՐԱՀԱՅՑ ՍԱՀՄԱՆԱՅՈՒՆԸ

Գեղարքունիքի մարզի Հայրավանք եւ Բերդկունք գյուղերի հարավային թևում, անասնապահական համալիրների ավերակ շենքի մոտ ընկած է մի քարակոթող, որը նման է սահմանաքարի:

Կոթողի ոչ մի հատվածում գիր չնկատվեց, ուստի Արտաշիսյան սահմանաքարի նմանեցնելու հիմք չունենք, սակայն կարելի է ենթադրել, որ այն կամ սահմանաքարի նախատիպ է, կամ պատրաստվել է Արտաշիսյան դարաշրջանից ավելի ուշ ժամանակներում:

Ամեն դեպքում, հստակ երեւում է քարի վերջնամասի տաշվածքը:

Կոթողը գտնելու համար մեզ կողմնորոշել էր հնագետ Լեւոն Մկրտչյանը:

Կոթողի շրջակայքում նկատվում են դամբարանադաշտեր, հին բնակատեղիների եւ պարիսպների հետքեր:

«Գեղամա աշխարհ»



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՈՒԺ-ՀԻՄ-ՆԱՐԿՆԵՐՈՒՄ 2025 ԹՎԱՆԿԱՆԻ ՆՈՅՆ-ԲԵՐԻՆ ԾՆՎԵԼ Է 139 ԵՐԵՒԱ

Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժփնդարկներում 2025 թվականի նոյեմբեր ամսին լույս աշխարհ են եկել 139 երեխա 77 տղա եւ 62 աղջիկ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական հարցերի վարչությունից, 80 ծնունդ գրանցվել է Մարտունու ծննդատանը, 22-ական ծնունդ՝ Գավառի եւ Սեւանի, 13 ծնունդ՝ Վարդենիսի բժշկական կենտրոններում, 2 ծնունդ՝ ճամբարակի առողջության կենտրոնում:

2024 թվականի նոյեմբեր ամսին Գեղարքունիքի մարզի բուժփնդարկներում ծնվել է 146 երեխա՝ 79 տղա եւ 67 աղջիկ:

ՄԵՎԱՆԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՅԵԼ ՎԱՀԱՆ ՏԵՐՑԱՆԻ ԾՆՆԻՅԱՆ 140-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մեւան քաղաքի Մետրոպ Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոցում անցկացվել է հայ մեծ քնարերգու Վահան Տերյանի ծննդյան 140-րդ ամյակին:

Մեւանի թիվ 1 հիմնական դպրոցի տնօրեն Աննա Նիկողոսյանի տեղեկացմամբ՝ միջոցառման նպատակն էր ընդգծել Վահան Տերյանի գրական ժառանգության անանց արժեքը, ներկայացնել նրա մարդկային կերպարը, ստեղծագործական աշխարհը եւ երիտասարդ սերնդին մոտեցնել քնարական բանաստեղծության նրբությունը:

Միջոցառումը կազմակերպել էին հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչներ Ռուզան Սաղաթեյանը եւ Մարիամ Դավթյանը, ովքեր մեծ սիրով եւ պատասխանատվությամբ էին պատրաստել 8-9-րդ դասարանի սովորողների ելույթները:

Սովորողները ներկայացրել են Տերյանի կյանքի եւ գրական գործունեության հետաքրքիր դրվագներ, ընթերցել նրա բանաստեղծությունները, արտասանել հատվածներ «Մթնշաղի անուրջներ» ու «Երկիր Նաիրի» բանաստեղծական ժողովածուներ:



րից: Բեմականացված փոքր հատվածները, երաժշտական ներածությունները եւ աշակերտների զգացված կատարումները միջոցառումը դարձրել են առանձնապես տպավորիչ:

Միջոցառումը դարձավ իրական գրական տոն լի տերյանական քնարերգությամբ, գեղեցիկ խոսքով ու ջերմությամբ: Այն եւս մեկ անգամ ապացուցեց, որ դպրոցում սերունդ ձեւակորելու գործում գրականության դերը անփոխարինելի է, իսկ մեծ գրողի ստեղծած հոգեւոր մշակույթը շարունակում է պարել նոր սերնդի սրտերում:

Ուսուցիչները կարողացան աշակերտների մեջ արթնացնել ոչ միայն հետաքրքրություն, այլեւ հուզում տերյանական խոհերի ու մեղմ զգացմունքների համդեպ, -ներկայացրեց Աննա Նիկողոսյանը:

«Գեղամա աշխարհ»

ԳԱՎԱՌԻ ԶԻՆԱՐԱԹ ՄԱՏՈՒՆԱՐԱՍԵՂԻՆ



Ասիգորը էջ 1-ում/

Հին մատուռի ներսում էլ պահպանված են պատմաճարտարապետական այն տարրերը, որոնք կարող են ստույգ տեղեկություններ տալ սրբավայրի հիմնադրման դարաշրջանի, պատմական միջավայրի ձեւավորման ու զարգացման մասին:

Առաջինը, որն աչքի է զարնում այդ տարրերից, հին մատուռի հյուսիսարեւմտյան պատի անկյունում հենված ու կանգնած վիճակում գտնվող քառակող սյունն է՝ ավելի քան մեկուկես մետր բարձրությամբ ու կես մետր կայունությամբ: Նրա վերին մասը, կտրված վիճակում, արելի սկավառակի պատկերով, գտնվում է քիչ հեռվում, հյուսիսային կողմի պատի ստորին հատվածում: Ու եթե միացվեն կողողի հատվածները, ապա այն կունենա մոտ երկու մետր բարձրություն, որը կարող է եւ ամենաբարձրը համարվել Գեղարքունիքի մարզում մինչ այժմ հայտնի քառակողների մեջ: Համամետաբար լավ պահպանված այս կողողը թվագր-

վում է վաղ միջնադարով՝ մոտ 6-7-րդ դարերով, ինչը հաստատեց նաեւ ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրեն, հնագետ Արսեն Բորոխյանը՝ մեր կողմից ուղարկված լուսանկարն ուսումնասիրելուց հետո: Հնագետների կարծիքով նման կողողները, որոնք համարվում են խաչքարերի նախատիպերը, դրվել են նորակառույց եկեղեցիների մուտքերի մոտ: Ու այս քառակողողի գոյությունն արդեն իսկ փաստում է, որ սրբատեղին գործել է վաղ միջնադարում՝ շատ ավելի վաղ, քան նշված է հուշարձանների պահպանության պետական գանկում՝ 13-14-րդ դարեր:

Հին մատուռի ներսում կա երկու գեղաքանդակ խաչքար ու մեկ խաչքարաբեկոր, որոնք իրենց պատրաստման ոճով նման են իններորդ դարի խաչքարերին: Լավ պահպանված է նաեւ մկրտության քարե ավազանը: Այսքանով արդեն իսկ հաստատվում է, որ սրբատեղին գործել է նաեւ իններորդ ու հետագա դարերի ընթացքում, անառարկելիորեն՝ հայկական միջավայրում:

Շատ հետաքրքիր ու հիմնավոր տեղեկություններ են տալիս նաեւ հուշարձանի պատերից դուրս գտնվող տարրերը՝ հին եկեղեցու հաստ պատերի հետքերը, որոնք գտնվում են նորակառույց մատուռի մուտքի դիմաց ձգվելով դեպի արեւմուտք ու թեքվելով դեպի

հյուսիս: Հին մատուռի հյուսիսային կողմում էլ նկատվում են հին ու հաստ պատերի հետքեր: Իսկ մատուռի արեւելյան կողմում հստակ նկատվում է կրոնիկի հետքը, որն արդեն սույն հուշարձանի պատմությունը տանում է դեպի հեռավոր հազարամյակների խորքերը կամ վաղբունգեղարյան ժամանակները:

Մատուռի հարավային կողմում, մի քանի տասնյակ մետր հեռավորությամբ, աչքի է զարնում արեւելքից արեւմուտք ձգվող պարիսպը, որը երևում է հողի շերտի տակից: Մի քանի տասնյակ մետր ներքեւում էլ նկատվում է պարսպի երկրորդ շարքը:

Հուշարձանի շրջակայքում նկատվել են նաեւ հին դամբարանների ու բնակատեղիների հետքեր, որոնք գործել են տեւական դարերի ընթացքում, քանի որ տարածքը շատ հարուստ է արտավայրերով ու ջրի պաշարներով, որսի կենդանիներով:

Հուշարձանի Ձիարաթ անունը գալիս է պատմության շատ մոտիկ ժամանակ-



ներից, երբ այս տարածքը որպես արտավայր ու շրջնադարում օգտագործել են եզդիները: Ավելորդ չէ հիշեցնել, որ եզդիների գլխավոր սրբավայր-տաճարը կոչվում է Ձիարաթ, որը հենց եզդիներով նշանակում է սրբատեղի:

Սակայն ամբողջ հարցն այն է, որ այս հուշարձանի ողջ տարածքում չկա մի հետք, որը կհիշեցնի եզդիական մշակույթը կամ միջավայրը: Այն բացառապես հայկական է ու հարկ է, որ իր վրա կրի, որքան շուտ, այնքան լավ, հայկական անվանում:

Իմ հաջորդ դիտարկումը, որն առավել քան հրատապ է՝ հուշարձանների պահպանության պետական ցանկում պետք ներառել ու հաշվառել այս հուշարձանի ներսում պահպանված քառակող սյունը, իններորդ դարի երկու խաչքարերը, քառակողող սյան գլխի ջարդված մասը, կնունքի քարե ավազանը՝ դրանք թվագրելով իրենց ստույգ ժամանակաշրջաններով: Դրանով իսկ հուշարձանը կունենա իր ստույգ ու ճշգրտված անձնագիրը:

Դժվար է ասել, թե ինչից, ինչ փաստից ելնելով են ժամանակին այս մատուռը համարել 13-14-րդ դարի կառույց, երբ մենք նման որեւէ հետք այդպես էլ չգտանք այդ տարածքով ու շինության ներսով մեկ:

Սրբավայրի արեւելյան կողմում, ինչպես ավիդ մեջ, երևում են Սեւանա լիճն ու Գավառի բնակավայրերը, հարավում ու արեւմուտքում՝ Գեղամա ու Վարդենիսի վեհ լեռնավահաններն ու բազմաթիվ լեռնագագաթները, հյուսիսում՝ Սեւանա լիճը երիզող Արեգունու ու Սեւանի լեռնաշղթաները:

Այս սրբավայրը, որ ուխտատեղի է համարվում դարեր շարունակ մեր ժողովրդի համար, դեռ կարիք ունի հնագիտական լուրջ ուսումնասիրման: Իսկ նրա ձգող հզորությունն ու ներշնչանքի ուժը զգալու համար հարկավոր է կյանքում գոնե մեկ անգամ անձամբ լինել սերունդների հիշողության մեջ սրբացած այս մատուռում:

Այս հուշարձանը ոչ թե պետք է լինի անտեսված կամ երկրորդված, այլ՝ ավելի արժեւորված ու կարեւորված: **Խոսքով Խլղաթյան**

«ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՎՈՒՅՅՐՈՒԻ ԼԻԳԱ» ՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԼՈՒՄ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԸ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ ԼՈՒՄԱԿՈՒՆԻՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԹԻՄԵՐԸ

ՀՀ Գեղարքունիքի մարզում ավարտվեցին ՀՀ վարչապետի հովանու ներքո անցկացվող «Դպրոցականների վոլեյբոլի լիգա» մարզական խաղերի համայնքային եւ մարզային փուլերի մրցումները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունից, 59 դպրոցների հավաքական թիմերում ընդգրկված 765 պատանիներ ու ազգիկներ մասնակցել են միջոցառման համայնքային փուլի մրցումներին: Այս փուլի 1-ին տարիքային խմբում հանդես են եկել 31, իսկ 2-րդ տարիքային խմբում՝ 54 դպրոցական թիմեր: Թիմերի կազմում ընդգրկված էին 9 մարզիկներ: Կանոնակարգի համաձայն՝ խաղադաշտում խաղի ընթացքում միաժամանակ պետք է գտնվեին 3 տղա եւ 3 աղջիկ: Համայնքային փուլում առաջին տեղ գրաված թիմերը մասնակցել են մարզային փուլի մրցումներին, որոնք անցկացվել են Գավառի Պ. Ղանդիյանի անվան Հ. 2 միջնակարգ դպրոցի մարզադահլիճում: Այս փուլում խաղերն անցկացվել են

կիսաօլիմպիական մրցակարգով: Նոյեմբերի 27-ին մրցապայքարի մեջ են մտել առաջին տարիքային խմբին մասնակցելու իրավունք ստացած թիմերը: Այս տարիքային խմբում Սեւան համայնքը ներկայացնում էր Ջովաբերի Ե. Չարենցի անվան, Գավառ համայնքը՝ Գավառի Պ. Ղանդիյանի անվան թիվ 2, Մարտունի համայնքը՝ Վերին Գետաշենի թիվ. 1, Ճամբարակ համայնքը՝ Թթուջրի եւ Վարդենիս համայնքը՝ Լուսակունքի միջնակարգ դպրոցների թիմերը: Ծավալված հետաքրքիր եւ անզիջում պայքարում առաջին տեղը գրավել է Լուսակունքի միջնակարգ դպրոցի թիմը: Երկրորդ հորիզոնականում էր Գավառի Պ. Ղանդիյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի թիմը, իսկ երրորդ հորիզոնականում՝ Թթուջրի միջնակարգ դպրոցի թիմը:

Մարզային փուլի երկրորդ տարիքային խմբի մրցումները կայացել են նոյեմբերի 28-ին: Այս տարիքային խմբում Սեւան համայնքը ներկայացնում էր Սեւանի Մետրոպ Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական, Գավառ համայնքը՝ Գա-

վառի Պ. Ղանդիյանի անվան թիվ 2, Մարտունի համայնքը՝ Լիճքի Հովի. Թունանյանի անվան միջնակարգ, Ճամբարակ համայնքը՝ Թթուջրի միջնակարգ եւ Վարդենիս համայնքը՝ Լուսակունքի միջնակարգ դպրոցների թիմերը: Այստեղ եւս ուժեղագույնը Լուսակունքի միջնակարգ դպրոցի թիմն է եղել: Երկրորդ եւ երրորդ տեղերը գրավել են համապատասխանաբար Գավառի Պ. Ղանդիյանի անվան թիվ 2 եւ Թթուջրի միջնակարգ դպրոցների թիմերը:

Մարզային փուլի երկու տարիքային խմբերում մրցանակային տեղեր գրաված թիմերին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից

հանձնվել են զավաթներ եւ հավաստագրեր:

«Դպրոցականների վոլեյբոլի լիգա» մարզական խաղերի եզրափակիչ փուլի երկու տարիքային խմբերի մրցումներում մեր մարզը կներկայացնեն Լուսակունքի միջնակարգ դպրոցի թիմերը: **Գեղամա Չարվադարյան**



ԾԱԿՔԱՐՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՈՒԲՎԵՆՅՈՒՆ 4 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար գյուղում 33 կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ավարտվել են մոտենում խմելու ջրատարի ներքին ցանցի կառուցման, 2 փողոցների հիմնանորոգման, մշակույթի տան մասնակի վերանորոգման եւ հանդիսությունների սրահի կառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Ծակքարի խմելու ջրատարի ներքին ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 82 միլիոն 413 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է 33 կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է խմելու ջրատարի ներքին ցանցի կառուցում Ծակքարի «Մատուռներ» թաղամասում եւ 2-րդ փողոցում, պոլիէթիլենային խողովակներով, 4780 գծամետր ընդհանուր երկարությամբ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի հունիսից եւ նոյեմբերի 28-ի դրությամբ իրականացվել շուրջ 95 տոկոսով:

Ծրագրի իրականացման արդյունքում մինչ տարեվերջ Ծակքարի 182 տնտեսություններ ապահովված կլինեն մշտական ու որակյալ խմելու ջրի մատակարարմամբ:

Շինարարական աշխատանքներն



իրականացնում է «Սուպեր Մոնոլիտ» ՍՊԸ-ն

Ծակքարի մշակույթի տան հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 40 միլիոն 560 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է 33 կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է մշակույթի տան սանհանգույցների եւ սեպտիկ հորի կառուցում, աստճանների ճաղավանդակների տեղադրում, տարածքի ասֆալտապատում եւ կանաչապատում, այլ աշխատանքներ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի հունի-

սից եւ ավարտվել նոյեմբերի սկզբներին:

Նախորդ տարիներին սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում Ծակքարի մշակույթի տան իրականացվել էին հիմնանորոգման աշխատանքներ, իսկ կիսատ մնացած աշխատանքներն ավարտվեցին այս տարվա ընթացքում:

Կարելի է ասել, որ Ծակքարի մշակույթի տան հիմնանորոգման ծրագիրը, որն ընթացել է մի քանի փուլով, հիմնովին ավարտված է,- նշեց Ծակքարի վարչական ղեկավար Արարատ Ավետիսյանը:

Ծակքարի հանդիսությունների սրահի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 145 միլիոն 920 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է 33 կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է հանդիսությունների միհարկանի սրահի կառուցում մոտ 600 քառակուսի մետր մակերեսով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի ապրիլից եւ ղեկտեմբերի 1-ի դրությամբ

իրականացվել շուրջ 80 տոկոսով: Այժմ ընթանում են շենքի ներքին հաղարման աշխատանքները:

Իրականացվել են նաեւ շենքի գազաֆիկացման, էլեկտրաֆիկացման, տարածքի ասֆալտապատման եւ բարեկարգման աշխատանքները:

Ծրագրի իրականացման արդյունքում Ծակքար գյուղի ողջ բնակչությունն օգտվելու է հանդիսությունների սրահի ծառայություններից:

Շենքը շահագործման կհանձնվի 2026 թվականի ընթացքում:

Ծակքարի երկու փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 64 միլիոն 12 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է 33 կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Ծակքարի 5-րդ փողոցի եւ 2-րդ փողոցի 5-րդ փակուղու ասֆալտապատում 760 գծամետր ընդհանուր երկարությամբ եւ շուրջ 4 հազար քառակուսի մետր մակերեսով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի հոկտեմբերից եւ ղեկտեմբերի 3-ի դրությամբ արդեն գտնվում են ավարտական փուլում:

Շինարարական աշխատանքներն իրականացրել է «ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ-ն:

Ծակքարի վերոնշյալ փողոցներն իրենց պատմությամբ մեջ ասֆալտապատվում են առաջին անգամ:

«Գեղամա աշխարհ»

ԼԻՃՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՅ Է ԿԱՌՈՒՑՎԵԼ



Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք գյուղում 33 կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում արդեն ավարտվել են մոտենում արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Լիճքի արտաքին լուսավորության

ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 35 միլիոն դրամ, որի 60 տոկոսը հատկացնում է 33 կառավարությունը, 40 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է արտաքին լուսավորության ցանցի կառուցում Լիճքի 11 փողոցներում, 5100 գծամետր ընդհանուր երկարությամբ, ԼԷԴ համակարգով աշխատող 170 լուսատուների տեղադրմամբ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի օգոստոս ամսից եւ նոյեմբերի 28-ի դրությամբ իրականացվել շուրջ 95 տոկոսով:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Սաշիկ եւ Սեւակ եղբայրներ» ՍՊԸ-ն:

Ծրագրի շահառու են հանդիսանում Լիճք գյուղի շուրջ 3000 բնակիչ:

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ 3 ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ՄԱՅԹԵՐԻ ՍԱԼԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գեղարքունիքի մարզի Մարտունի թաղաքի Նարեկացի, Ալաշկերտ եւ Դավիթ Անհաղթ փողոցներում ընթանում են մայթերի սալարկման աշխատանքներ 33 կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Մարտունու երեք փողոցների մայթերի սալարկման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 74 միլիոն 520 հազար դրամ, որի 70 տոկոսը հատկացնում է 33 կառավարությունը, 30 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Մարտունի թաղաքի Ալաշկերտ, Նարեկացի եւ Դավիթ Անհաղթ փողոցների մայթերի սալարկում 1047 գծամետր ընդհանուր երկարությամբ եւ 1844 քառակուսի մետր մակերեսով:



Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի սեպտեմբերից եւ նոյեմբերի 28-ի դրությամբ իրականացվել շուրջ 20 տոկոսով:

Շինարարությունը նախատեսվում է ավարտել 2026 թվականի փետրվարին:

Աշխատանքներն իրականացնում է «Գլոբոն Էնթերփրայսիս» ՍՊԸ-ն:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի սեպտեմբերից եւ նոյեմբերի 28-ի դրությամբ իրականացվել շուրջ 20 տոկոսով:

Շինարարությունը նախատեսվում է ավարտել 2026 թվականի փետրվարին:

Աշխատանքներն իրականացնում է «Գլոբոն Էնթերփրայսիս» ՍՊԸ-ն:

«ՎԱՐՂԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ ԳՎԱԹ» ՖՈՒՏՅՈՒԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ ՀԱՂԹԵԼ Է «ԱՎՈՒՆԲ-1» ԹԻՄԸ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում ավարտվել է «Վարդենիսի համայնքապետի գավաթ» ֆուտբոլային մրցաշարը:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, մրցաշարը մեկնարկել էր 2025 թվականի հոկտեմբերից, ինը թիմերի մասնակցությամբ: Նախնական փուլի արդյունքներով կիսաեզրափակիչ էին դուրս եկել «Ակունք-1», «Վարդենիս-2», «Ծովակ» եւ «Չառլշ» թիմերը:

Նոյեմբերի 27-ին եզրափակիչ խաղում գլխավոր մրցանակը վիճարկել են Ակունք գյուղի «Ակունք-1» եւ Վարդենիս թաղաքի «Վարդենիս-2» թիմերը: Ելքոված պայքարում 3:2 հաշվով հաղթել է «Ակունք-1» թիմը եւ ճանաչվել մրցաշարի հաղթող: Երկրորդ տեղը, բնականաբար, գրավել է «Վարդենիս-2» թիմը:

Երրորդ տեղի համար մրցել են Ակունք գյուղի «Չառլշ» եւ Ծովակ գյուղի «Ծովակ» թիմերը: «Ծովակ»-ը հաղթել է բացարձակ առավելությամբ 6:1 հաշվով:

Եզրափակիչ խաղերից հետո տեղի է ունեցել մրցանակաբաշխության արարողություն:

Հաղթող թիմին հանձնվել է մրցաշարի գավաթը եւ 200 հազար դրամ դրամական պարգև: 2-րդ տեղ



ԳՎԱԹՔԱՐՔԻ ԱՐԾՎԱՔԱՐ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ՈՒՌԳՄԱՆ ԵՎ ՋՐԱՇԵՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է ԿԱՌՈՒՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Գավառ թաղաքի Արծվաքար թաղամասում 33 կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ավարտվել են ոռոգման եւ ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքները:

Արծվաքարի ոռոգման եւ ջրահեռացման համակարգի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 6 միլիոն 800 հազար դրամ, որի 75 տոկոսն հատկացվել է պետական, 25 տոկոսը՝ համայնքի բյուջեից:

Ծրագրով կառուցվել է շուրջ 400 մետր երկարությամբ ջրահեռացման եւ ոռոգման համար նախատեսված նոր համակարգ. տեղադրվել են երկաթբետոնյա վաքեր եւ անցումային երկաթյա խողովակներ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի հոկտեմբերին եւ ավարտվել նոյեմբերի երկրորդ տասնօրյակում:

Ծրագրի իրականացման շնորհիվ Գավառ թաղաքի Արծվաքար թաղամասի Սազայու փողոցն այժմ ավելի մաքուր տեսք ունի, ձնհալքի եւ անձրեւների ջրերը այլևս չեն հեղեղի տարածքը, եւ բնակիչների համար տեղաշարժվելու դժվարություններ արդեն չեն ստեղծվի: Նախկին վիճակի մասին բնակիչները ներկայացրել էին Գավառի համայնքապետարան, ու խնդրի լուծումը չի ունեցել: Կատարված աշխատանքների արդյունքում նաեւ հնարավոր է այս տարածքի տնամերձերի ոռոգումը կազմակերպել: Բնակիչներն ասում են, որ ոռոգման հետ կապված դժվարությունների պատճառով հողամասերի մեծ մասը չէր մշակվում, իսկ եկղ տարվանից արդեն էականորեն կավելանան մշակվող հողատարածքները:

Ավարդ Սանուկյան



ՎՈՒՐՈՒՅԱ ՄԶԵՐՅԱՆԻ ԹՈՂԱԾ ԳՈՐԾԻ ՈՒ ԱՆՈՒՆԸ ԿԱՊՐԵՆ ՀԱՎԵՐԺ



87 տարեկան հասակում երկրային կյանքին հրաժեշտ տվեց Մարտունի քաղաքի բնակիչ, Մարտունու մանկապատանեկան մարզադպրոցի նախկին տնօրեն, մարզիչ, մանկավարժ, քաղաքի ու շրջանի մարզական կյանքում ծանրակշիռ ավանդ ներդրած անձնավորությունը՝ Վոլոդյա Յակոբի Միերյանը:

Նա ծնվել է 1938 թվականի մայիսի 30-ին, ՀԽՍՀ Մարտունու շրջանի Մարտունի ավանում, ծառայողի ընտանիքում: 1945-1955 թվականներին սովորել է ավարտել է Մարտունու միջնակարգ դպրոցը: Դպրոցական տարիներին, աչքի ընկնելով ակտիվությամբ ու կազմակերպչական ունակություններով, ընտրվել է դպրոցի կոմերտմիության կազմակերպության առաջին քարտուղար:

1955-1956 թվականներին աշխատել է Մարտունու կոլտնտեսությունում որպես գրադարանավար, եւ միաժամանակ կատարել կոմերտմիության կազմակերպության առաջին քարտուղարի պարտականությունները: Առանձնահատուկ սեր ունենալով սպորտի նկատմամբ՝ այդ տարիներին զգալի աշխատանք է տարել կոլտնտեսությունում սպորտը մասսայականացնելու ուղղությամբ: ստեղծել է վոլեյբոլի եւ ֆուտբոլի խմբեր, որոնք շրջանային մրցումներում գրավել են մրցանակային տեղեր:

1956 թվականին գորակոչվել է Սովետական բանակ: 1956-1957 թվականներին սովորել է ավարտել է Մոսկվայի մարզի Նախաբինո քաղաքի սերժանտական դպրոցը: 1957-1959 թվականներին գործնական վարել է դասակի հրմանատարի պաշտոնը՝ ավագ սերժանտի կոչումով, իսկ հետագայում ծառայել է նաեւ կապիտանի զինվորական կոչումով:

1959 թվականին գորացրվել է բանակից եւ ընդունվել Երեւանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտ: 1965 թվականին, ավարտելով ինստիտուտը, նշանակվել է Մարտունու N1 միջն. դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ:

1964-1966 թվականներին աշխատել է ֆիզկուլտուրայի եւ սպորտի շրջանային կոմիտեում որպես հրահանգիչ: 1966 թվականի սեպտեմբերից առաջ է քաշվել եւ նշանակվել Մարտունու ժողկրթաժնի մարզադպրոցի տնօրենի պաշտոնում:

Նրա ղեկավարմամբ Մարտունու մանկապատանեկան մարզադպրոցն ունեցել է հսկայական ձեռքբերումներ ու ծանրակշիռ նվաճումներ, որոնք ունեցել են գրվել Մարտունի քաղաքի ու շրջանի մարզաշխարհի պատմության մեջ: Վոլոդյա Միերյանը հատկապես նշանակալի աշխատանք է կատարել մարզական կարգերով մարզադպրոցը համալրելու ուղղությամբ: Նրա ղեկավարած դպրոցը շնորհիվ հաղթանակներ էր տանում դպրոցականների համամիութենական սպորտակիստներում՝ ամենատարբեր մարզաձեւերում: Բավական է նշել, որ Հայաստանի Հանրապետության թիավարության հավաքականի կազմում ընդգրկված էին Մարտունու մարզադպրոցի 10 մարզիկ: Միջազգային տարբեր մրցաշարերի եւ մասնակցել նաեւ մարզադպրոցի ըմբիշները եւ թեթևատիկները: Մարզադպրոցին մեծ հռչակ ապահովեց հատկապես ԽՍՀՄ թիավարության հավաքականի թիմի անդամ Սոֆիկ Հայրապետյանը, ով դարձավ ԽՍՀՄ չեմպիոն եւ ընդգրկվեց ԽՍՀՄ օլիմպիական հավաքականի կազմում:

Վոլոդյա Միերյանի դերը մեծ է նաեւ մարզադպրոցում նախապատրաստական խմբերի ստեղծման եւ նրանց գործունեության ուղղությամբ: Մարզադպրոցը 1980 թվականին Օսմըրցությունում հանրապետությունը գրավել է 3-րդ մրցակցային տեղը՝ արժանանալով ՀԽՍՀ Լուսավորության մինստրոյան պատվոգրին եւ դրամական պարգևի:

Վոլոդյա Միերյանը 1976-1984 թվականներին աշխատել է որպես Մարտունու ժողկրթաժնի կուսակցական կազմակերպության առաջին քարտուղար: Լավագույն աշխատանքի համար պարգևատրվել է «Աշխատանքի վետերան» մեդալով, «Սոցմրցության հաղթող», «ժողովրդական գերազանցիկ» եւ «ՊԱՊ. 50 տարի» կրծքանշաններով, բազմաթիվ պատվոգրերով եւ գովասանագրերով:

Երկարատեւ, նվիրական ու անբասիր աշխատանքի համար արժանացել է «Սպորտի վաստակավոր աշխատողի» պատվավոր կոչման:

Նրա անձնական նվիրվածության շնորհիվ էր, որ 1980 թվականին բարելավվեցին մարզադպրոցի շենքային պայմանները:



Վոլոդյա Միերյանի ղեկավարած մարզադպրոցն ակնառու հաջողությունների է հասել նաեւ ծանրամարտ եւ ըմբշամարտ մարզաձեւերում: Մարզադպրոցը տարբեր տարիների ընթացքում պատրաստել է 29 սպորտի վարպետներ, 75 սպորտի վարպետության թեկնածուներ, 210 առաջին կարգի եւ շատ ու շատ թվով պատանեկան կարգի մարզիկներ: Մարզադպրոցի մարզիչներից 3-ը ստացել են «Վաստակավոր մարզիչ» կոչում, իսկ մեկը՝ «Ֆիզկուլտուրայի վաստակավոր աշխատողի» կոչում:

Մարտունու մարզադպրոցը նրա ղեկավարման տարիներին տվել է շուրջ 6000 շրջանավարտ, որոնցից 31-ը բարձրագույն մասնագիտական կրթություն են ստացել ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտում: Նա միշտ աշխատանքում հանդես է եկել ստեղծագործական նախաձեռնությամբ եւ անձնական օրինակ է ծառայել շատերի համար:

Վոլոդյա Միերյանը, տնօրենի պաշտոնին զուգահեռ, կատարել է նաեւ մարզական աշխատանք մարզելով «Երեւունի» մանկապատանեկան ֆուտբոլի թիմը: Նրա սաներից կազմավորված «Ալպներտ» ֆուտբոլային թիմը ժամանակին հանդես է եկել հանրապետության առաջնության մրցումներում, իսկ նրա սան Ռոմիկ Խաչատրյանը ընդգրկված էր ֆուտբոլի Հայաստանի հավաքականի կազմում, խաղում էր Կիպրոսի «Օլիմպիական»

«Անարտոսիս». ԱՊՕԷԼ», Ռումինիայի «Կլուժ» եւ հայկական ու արտասահմանային այլ թիմերի կազմերում:

Մարզադպրոցը տվել է նաեւ Սիդնեյի օլիմպիական խաղերի մասնակից հանձինս ծովասարցի ըմբշամարտիկ Արշակ Հայրապետյանի:

1982-1985 թվականներին նախապատրաստական խմբերի լավ աշխատանքի համար Մարտունու մարզադպրոցը ճանաչվել է առաջավոր փորձի հաստատություն եւ մասնակցել 1984 թվականին Էստոնիայի մայրաքաղաք Տալլինում կայացած համամիութենական ցուցահանդեսին:

Եական ձեռքբերումների ու հաջողությունների շնորհիվ 1980-ական թվականներին, մի քանի տարի անընդմեջ, Մարտունին Հայաստանի Հանրապետությունում ճանաչվել է որպես «Լավագույն մարզական շրջան»:

Նա միաժամանակ պարբերաբար մեթոդական եւ պրակտիկ օգնություն է ցույց տվել շրջանի հանրակրթական բոլոր դպրոցներում՝ շուրջ 25 տարի աշխատելով շրջանային ժողկրթաժնի ֆիզկուլտուրայի մեթոդիստ: Նրա ավանդը մեծ է հատկապես հանրակրթական դպրոցներում՝ ՊԱՊ համալիրի ներգրավման եւ մասսայականացման ուղղությամբ:

Վոլոդյա Միերյանը միշտ աշխատել է «Օլիմպիականները մեր շարքերում են» նշանաբանով կազմակերպելով եւ անցկացնելով շրջանային սպորտակիստները, աշխատանքներով արտադասարանական խմբակների աշխատանքը հանրակրթական դպրոցներում:

Այսօր էլ Մարտունու մանկապատանեկան մարզադպրոցը, թիկունքում ունենալով այդ տարիների փառահեղ նվաճումները, շարունակում է նկատելի նվաճումները թե՛ հանրապետական, թե՛ միջազգային ստուգատեսներում:

Իր գործի նվիրյալ տնօրենի, մարզիչի ու մանկավարժի, պարտաճանաչ ու հայրենասեր քաղաքացու, սիրված անուսնու, ծնողի, ընկերոջ, բարեկամի, մարդկային արժանիքներ կրող մարդու՝ Վոլոդյա Յակոբի Միերյանի թողած գործն ու անունը հավերժ կապրեն սերունդների հիշողության մեջ:

Մարտունու համայնքապետարան «Գեղամա աշխարհ»

ՎԱՐՈՒՅՈՒՄԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ ԲԱՅՎԵԼ Է ԱՐՅԱՆՅԱՆ 44-ՕՐԹԱ ՊԱՏԵՐԱԶՄԵՐՈՒՄ ԶՈՆՎԱԾ ՀԱՅՈՐԻՒՆԵՐԻ ՀՈՒՇԱՆԿՅՈՒՄ



Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի քաղաքային գրադարանում բացվել է «Ինձ բացակա չունեք» խորագրով հուշանկյուն՝ նվիրված Արցախյան 44-օրյա պատերազմում եւ 2022 թվականի սեպտեմբերին աղբյուրանակաճ ագրեսիայի ընթացքում զոհված վարդենիցի անմահ հերոսների հիշատակին:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, հուշանկյուն բացումից հետո տեղի է ունեցել հուշ-ցերեկույթ, որին հրավիրվել է Իշխանասարի անմահ հերոս Հայկ Կարենի Գասպարյանի մայրը՝ Մարգարիտ Հակոբյանը: Միջոցառմանը ներկա են եղել Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի, քաղաքի կրթաճակատային հաստատությունների աշխատանքիցներ, զոհվածների հարազատներ: Ներկայացվել են բոլոր հերոսների կենսագրական տվյալները, անցած մարտական ուղիները, նրանց կյանքի հերոսական դրվագները:

Հերոսները չեն մահանում, նրանք նահատակվում ու անմահանում են՝ միաժամանակ կերտելով հայ ժողովրդի հերոսական պատմությունն ու ապրեցնում բոլորին: Մենք հավերժ խոնարհվում ենք նրանց սուրբ հիշատակի առաջ ու պարտավորվում՝ հզորացնել ու շենացնել այն հայրենիքը, հանուն որի իրենց կյանքները չխնայեցին մեր քաջերը,- նշել է գրադարանի տնօրեն Քրիստինե Պետրոսյանը:

ՄԱՐՏՈՒՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՄԱՆԵՐԸ ՄՐՅԱՆԱԿՆԵՐ ԵՆ ՆՎԱՃԵԼ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՏՈՒԳ ԱՏԵՄՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի արվեստի դպրոցի սաները մրցանակների են արժանացել վերջերս ավարտված հանրապետական ստուգատեսում:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Մարտունու մանկական արվեստի դպրոցի սաները նոյեմբերի 30-ին Երեւանում մասնակցել են «MINORA Cultural Center»-ի կողմից կազմակերպված «Global International Art Fest» նկարիչների մրցույթին, որի ամփոփիչ արդյունքներով Գոհար Գեւորգյանն արժանացել է մրցույթի գլխավոր Գրան պրի մրցանակին: Նազենի Մկրտչյանը ստացել է հատուկ մրցանակ, իսկ Դեյվիդ Գասպարյանը եւ Վիլեն Սարգսյանը հրավիրվել են մասնակցելու «Մուլտիկուլի» հաղորդաշարին:

Տարբեր տարիքային խմբերում հանդես եկած սաները նաեւ արժանացել են առաջին, երկրորդ եւ երրորդ կարգի դիպլոմների, ինչպես նաեւ հուշանվեր:

ԳԱԳԱՐԻՆ ԳՅՈՒՂԻ ՇԻՐԱԶ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԱՎԱՐՏՎԵԼ ԵՆ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Գագարին գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ավարտվել են Շիրազի փողոցի հիմնանորոգման աշխատանքները: Գագարին գյուղի Շիրազ փողոցի հիմնանորոգումն ընդգրկում է 9616 քառակուսի մետր տարածք:



Ների: -Այս ամենը ջանադիր ու նպատակադրված աշխատանքի արդյունք է, արդար ու ճիշտ գնահատական: Մենք հպարտ ենք մեր շնորհաշատ սաներով,-նշեց Մարտունու համայնքապետարանի ԿՄՍԵ բաժնի վարիչ Դավիթ Դավթյանը:



Ծրագրի պայմանագրային արժեքը 147 միլիոն 638 000 դրամ է, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Սեւանի համայնքապետարանը:

Շինարարական աշխատանքները մեկնարկել էին 2025 թվականի սեպտեմբերից եւ ավարտվել նույն տարվա նոյեմբերի ընթացքում:

Սահմանված ժամկետներում «Ճան-Շին» ՍՊԸ կապալառու կազմակերպության կողմից իրականացվել են նախատեսված շինարարական աշխատանքները, որի արդյունքում արդեն Գագարին բնակավայրի Շիրազի փողոցը ներկայումս է նորովի եւ բարեկարգ տեսքով ապահովվելով մարդկանց եւ ավտոմեքենաների անվտանգ երթուղի:

Ասֆալտապատմանը հաջորդել են գծանշման աշխատանքները: Պետություն-համայնք արդյունավետ համագործակցության արդյունքում իրողություն են դառնում համայնքապալական ծրագրերը:
Արմինե Ղուկասյան

Անողորք ու վաղաժամ մահը մեզանից խլեց Հայոց հայրենիքի կրթության զարգացմանը զինվորագրված նվիրյալներից մեկին՝ մանկավարժական ու դպրոցի կառավարման ոլորտներում նշանակալի ճանապարհ անցած Նելլի Վազգենի Հակոբյանին, ով դեռ հսկայական անելիքներ ու նպատակներ ուներ մատաղ սերունդի կրթության ու դաստիարակության սուրբ գործում:

Նելլի Հակոբյանը ծնվել է 1979 թվականի դեկտեմբերի 3-ին, ՀԽՍՀ Կամոյի շրջանի Գեղարքունիք գյուղում: 1996 թվականին գերագանցությամբ ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը: Նույն տարում ընդունվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Մաթեմատիկայի» բաժին: Բարձր առաջադիմությամբ ավարտել է բուհը 2001 թվականին:



Վար, հմուտ ու փորձառու մանկավարժ:

Նա մասնակցել է հաջողությամբ ավարտել է մի շարք ծրագրեր ու դասընթացներ, որոնք են՝ «Համակարգչային գործավարչություն», «Ֆինանսական կրթության ինտեգրում մաթեմատիկայի մեջ», «Դպրոցի փաստաթղթաշրջանառություն», «Գյուղատնտեսության ոլորտում նորարարական լուծումներ», «Մաթեմատիկան որպես աշակերտի զարգացման միջոց», «52-ժամյա վերապատրաստում հանրակրթական ուսուցիչների հմտությունների զարգացման շրջանակում», «Ներառական կրթություն», «Տնօրենների վերապատրաստումներ», «Առավել որակյալ ուսուցում» սեմինարները կամ դասընթացները:

Յուրաքանչյուր Մասնակցել է նաև ԵՊՄՀ կիրառական տնտեսագիտության երկամյա դասընթացների:

Իր մասնագիտական նվաճումների համար արժանացել է մի շարք հավաստագրերի, շնորհակալագրերի եւ մրցանակների, որոնց մեջ ներառված են Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրերը տրված 2014, 2019, 2024 թվականներին: Հաղթող է ճանաչվել «Լավագույն տնօրեն» 2024 թ. «Ամսվա լավագույններ» մրցույթում: «Լավագույն տնօրեն» կղզման է արժանացել ԿՀՆԱԿ-ի կողմից 2023 թվականին հայտարարված մրցույթում: Մեծ շնորհակալագրեր է ստացել 2023 թվականին: «Լավագույն ուսուցիչ» մրցույթի մասնակցել է 2021 թվականին:

Արժանացել է ՀԱԱՀ, ԿՀՆԱԿ, «Ջինիշյան հիշատակի հիմնադրամ» եւ այլ կառույցների շնորհակալագրերին:

Տարիների ընթացքում նա մշտապես հանդես է եկել նախաձեռնություններով, աջակցել է համայնքային կրթական ծրագրերին, խրախուսել ուսումնա-հետազոտական խմբերի գործունեությունը եւ նպաստել դպրոցի կրթական միջավայրի զարգացմանը:

Նրա ղեկավարման տարիներին Գեղարքունիքի միջնակարգ դպրոցը հանրաճանաչ դարձավ ոչ միայն Գեղարքունիքի մարզում, այլ նաև Հայաս-

տանի Հանրապետության ողջ տարածքում համագործակցելով պետական ու միջազգային տարբեր կառույցների, ինչպես նաև՝ այլ մարզերի դպրոցների հետ: Իրականացված մի շարք ծրագրերի շնորհիվ դպրոցում հիմնվել է ջերմոցային տնտեսություն, հիմնադրվել ու վերագինվել է դպրոցի գրադարանը, կահավորվել է վերագինվել են ֆիզիկայի եւ քիմիայի լաբորատորիաները:

Նելլի Հակոբյանը ստեղծել է հրաշալի ու ներդաշնակ ընտանիք, որտեղ սրբացված է կրթությունը, ազգային ու համամարդկային արժեքները, աշխատասիրությունը, մարդասիրությունն ու հայրենասիրությունը: Նա նաև սիրով կին ու հոգատար ծնող էր իր երեք զավակների մեջ ներառելով անսահման սերն ուսման հանդեպ: Պատահական չէ, որ նրա երեք զավակներն այս պահին սովորում են Հայաստանի Հանրապետության տարբեր բուհերում: Իսկ նրանցից ավագը Լուսինե Գրիգորյանը, Ոսկե մեդալով ավարտեց Գեղարքունիքի միջնակարգ դպրոցը:

Շատ դժվար է հավատալ, որ այլևս մեր կողքին չէ մեր շատ սիրելի, եռանդուն, նախաձեռնող, կենսախիղճ գործընկերն ու բարեկամը, ղեկավարն ու մարդանոտ, հարազատ ընկերը, ով արդեն հավերժ ներկա է մնալու ապրողներին սրտերում: Իսկ նրա թողած անունն ու գործը հավետ կապրեն գալիք ժամանակներում:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց «Գեղամա աշխարհ» թերթի խմբագրություն

ԼԻԾՔՈՒՄ ՈՒՌՈՎՄԱՆ ԶՐԱՏԱՐԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ



Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիծք գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում սկսվել է ընթացումն են ոռոգման ջրատարի ներքին ցանցի կառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Լիծքի ոռոգման ջրատարի ներքին ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 37 միլիոն 809 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է ոռոգման ջրատարի ներքին ցանցի կառուցում Լիծք գյուղի Ա2 թաղամասի 9-րդ եւ Ա5 թաղամասի 4-րդ փողոցներում, շուրջ 100 գծամետրը՝ երկաթբետոնյա կիսախողովակներով, մնացած 750 գծամետրը՝ երկաթյա կիսախողովակներով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի հոկտեմբերից եւ դեկտեմբերի 11-ի դրությամբ իրականացվել շուրջ 80 տոկոսով:

Աշխատանքներն իրականացնում է «Բիդեք» ընկերությունը:

Ծրագրի իրականացման արդյունքում եկող տարվա ոռոգման շրջանի մեկնարկում ջուրը շահառու հանդիսացող 700 տնտեսություններին, մոտ 150 հեկտար ցանքերում, կմատակարարվի ժամանակին եւ անկորուստ:

ՎԱՂԱՇԵՆԻ 3-ՐԴ, 6-ՐԴ ԵՎ 7-ՐԴ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԳՏԵՎՈՒՄ ԵՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վաղաշեն գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ավարտին են մոտենում 3-րդ, 6-րդ եւ 7-րդ փողոցների հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Վաղաշենի փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 112 միլիոն դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է 3-րդ, 6-րդ եւ 7-րդ փողոցների հիմնանորոգում ասֆալտապատմամբ ու ջրահեռացման համակարգի տեղադրմամբ, 1370 գծամետր ընդհանուր երկարությամբ եւ 6850 քառակուսի մետր մակերեսով:

Շինարարական աշխատանքները, որոնք իրականացնում է «ՎՄՎ ԲՄՓՆԻ» ՍՊԸ-ն, մեկնարկել են 2025 թվականի հոկտեմբերից եւ դեկտեմբերի 10-ի



դրությամբ գտնվում են ավարտական փուլում: Այս փողոցներն իրենց պատմության ընթացքում ասֆալտապատվում են առաջին անգամ:

ԶՈՐԱԳՑՈՒՂՈՒՄ ՀԻՄՆԱՆՈՐՈՎՎՈՒՄ Է ԵՐԵՎ ՓՈՂՈՑ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զորագյուղ գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հիմնանորոգվում են 8, 9 եւ 13-րդ փողոցները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Զորագյուղի երեք փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 101 միլիոն 385 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Զորագյուղի 8, 9 եւ 13-րդ փողոցների ասֆալտապատում 1260 մետր ընդհանուր երկարությամբ եւ 6300 քառակուսի մետր մակերեսով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի հոկտեմբերից եւ դեկտեմբերի 10-ի դրությամբ իրականացվել շուրջ 80 տոկոսով:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «ՎՄՎ ԲՄՓՆԻ» ՍՊԸ-ն:

Զորագյուղի վերոնշյալ փողոցներն իրենց պատմության մեջ ասֆալտապատվում են առաջին անգամ:

փողոցները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Զորագյուղի երեք փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 101 միլիոն 385 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Զորագյուղի 8, 9 եւ 13-րդ փողոցների ասֆալտապատում 1260 մետր ընդհանուր երկարությամբ եւ 6300 քառակուսի մետր մակերեսով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի հոկտեմբերից եւ դեկտեմբերի 10-ի դրությամբ իրականացվել շուրջ 80 տոկոսով:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «ՎՄՎ ԲՄՓՆԻ» ՍՊԸ-ն:

Զորագյուղի վերոնշյալ փողոցներն իրենց պատմության մեջ ասֆալտապատվում են առաջին անգամ:

Հայտարարվում է մրցույթ ՀՀ ԿԳՄՍՆ «Մարտունու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի գինդեկի պաշտոնի թափուր տեղի համար:

Ձինդեկի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դրույթի:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափսի,
- Փաստաթուղթ (դիպլոմ)՝ Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
- Անձը հավաստող փաստաթուղթ,
- Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք՝ աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
- Ինքնակենսագրություն (Չև 5),
- Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- Թափուր աշխատատեղը գբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները, (դրանց առկայության դեպքում),

Մրցույթին մասնակցողը պարտադիր պիտի ունենա պահեստգործի սպայի կոչում եւ տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից տրված տեղեկանք կամ ուղեգիր:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից 2025թ. դեկտեմբերի 12-ից մինչև դեկտեմբերի 25-ը ներառյալ, ամեն օր, ժամը 10 00-ից մինչև 15 00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025թ. դեկտեմբերի 30-ին ժամը 14:00-ին Մարտունու պետական բժշկական քոլեջում:

Հասցե՝ ք.Մարտունի, Նարեկացի 2/1, հեռախոս՝ (0262) 41330:

Հայտարարություն «ԵՆ՝ Նվեր Ռոբերտի Գրիգորյան, ներողություն են խնդրում Հայկ Աշոտի Սարիբեկյանից»

ԵՆ՝ Նվեր Ռոբերտի Գրիգորյան, 05.06.2024 թվականին ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղում Հայկ Աշոտի Սարիբեկյանի վերաբերյալ կատարել են վիրավորական արտահայտություն, ինչի համար ներողություն են խնդրում Հայկ Աշոտի Սարիբեկյանից»: